

Կ-593-09.09.2014,01.10.2014-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման ոլորտում առաջացող հարաբերությունները, սահմանում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցում իրականացնող մարմնի իրավասությունները, շարժական գույքին առնչվող իրավունքների վերաբերյալ գրանցման առանձնահատկությունները և դրանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պայմաններն ու կարգը:

2. Սույն օրենքը չի կարգավորում բանկային հաշիվների, ինչպես նաև դեպոզիտների նկատմամբ իրավունքների գրանցման հետ կապված հարաբերությունները:

3. Սույն օրենքը չի կարգավորում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արժեթղթերի գրանցման հետ կապված հարաբերությունները:

4. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում պետական, ծառայողական, բանկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք համարվող տեղեկությունների վրա:

Հոդված 2. Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին օրենսդրությունը

1. Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով և այլ օրենքներով:

2. Շարժական գույքի նկատմամբ գրավի և այլ իրավունքների պարտադիր գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այլ օրենքներով և իրավական ակտերով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) **շարժական գույք`** անշարժ չհամարվող ցանկացած գույք, ներառյալ` կանխիկ դրամական միջոցները, ապագայում ձեռք բերվելիք շարժական գույքը և գույքային իրավունքները, մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքները, շարժական գույքի լիզինգի պայմանագրից ծագող վարձակալության իրավունքները, սեփականության իրավունքի պահպանմամբ առուվաճառքի իրավունքը, շրջանառության մեջ գտնվող ապրանքները, պահանջի իրավունքները, մեկ տարի և ավել ժամկետով կնքված շարժական գույքի վարձակալության իրավունքը, կոմիսիայի առարկա շարժական գույքի նկատմամբ իրավունքները, օդանավերը, հաստոցները, սարքավորումները, գյուղատնտեսական տեխնիկան, գյուղատնտեսական մթերքները, կենդանիները և թռչունները, ներմուծված, սակայն չմաքսագերծված շարժական գույքը և այլ շարժական գույքը.

2) **լիազոր մարմին`** շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցում իրականացնող մարմին.

3) **ծանրաբեռնում`** պայմանագրի կամ օրենքի ուժով ծագած պարտապանի պարտավորության կատարման ապահովման միջոց, որն առաջացնում է շարժական գույքի նկատմամբ պարտատիրոջ գույքային իրավունք.

4) **սահմանափակում`** դատական ակտերի, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, քրեական հետապնդում իրականացնող մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների (այսուհետ` սահմանափակում կիրառող իրավասու մարմիններ) որոշումների հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային իրավունքների իրացման սահմանափակում.

5) **գրանցում`** շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցում, ներառյալ` իրավունքների փոփոխում, դադարեցում.

6) **միասնական գրանցամատյան (այսուհետ` Գրանցամատյան)`** էլեկտրոնային տվյալների համակարգ, որը պարունակում է սույն օրենքով նախատեսված

տեղեկությունները շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների վերաբերյալ.

7) **գույքացուցակ`** պարտապանի` սույն օրենքով գրանցման ենթակա մեկից ավելի շարժական գույքի ցանկ.

8) **առաջնային գրանցում`** շարժական գույքը ծանրաբեռնելու վերաբերյալ Գրանցամատյանում կատարված գրանցում.

9) **շարժական գույքի նույնականացում`** շարժական գույքի տեսակների դասակարգմանը համապատասխանող թվային և այբբենական ձևով շարժական գույքը համարակալող անփոփոխ համարանիշ.

10) **դիմող անձի ստորագրություն`** դիմող անձի կողմից դիմումի վրա կատարված էլեկտրոնային ստորագրություն կամ թղթային դիմումի հիման վրա սպասարկման գրասենյակի կողմից կատարված էլեկտրոնային ստորագրություն.

11) **սպասարկման գրասենյակ`** Լիազոր մարմնի համացանցում բոլորին հասանելի ապահովված տիրույթ, սպասարկման գրասենյակի գործառույթներ իրականացնող նոտար:

Հոդված 4. Գրանցման նպատակը

Գրանցման նպատակն է տեղեկատվություն հավաքագրելու միջոցով նպաստել`

1) շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների հետ կապված տեղեկատվության հասանելիությանը.

2) շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների էլեկտրոնային տվյալների միասնական շտեմարանի ստեղծմանը.

3) շարժական գույքի հետ կապված իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների գրանցման և տեղեկատվության պահպանմանը.

4) շարժական գույքի հետ կապված նախապատվության իրավունքի իրացմանը.

5) վիճակագրական տվյալների հավաքագրմանը:

Հոդված 5. Գրանցամատյանում պահվող տեղեկությունների հրապարակայնությունը

1. Գրանցամատյանի տեղեկատվությունը հրապարակային է:

2. Գրանցամատյանի գրանցումներին կարող է ծանոթանալ ցանկացած անձ:

3. Գրանցամատյանի տեղեկատվությունը, ինչպես նաև քաղվածքները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից նախատեսված կարգով:

Հոդված 6. Գրանցամատյանի էլեկտրոնային վարումը և տեղեկությունների տրամադրումը

1. Գրանցամատյանը վարվում է լիազոր մարմնի կողմից էլեկտրոնային եղանակով: Լիազոր մարմնի կողմից գրանցման գործընթացներն իրականացվում են էլեկտրոնային եղանակով:

2. Լիազոր մարմնի գործառույթների իրականացման արդյունքում կայացվող ակտերը, Գրանցամատյանի քաղվածքները տրամադրվում են էլեկտրոնային եղանակով:

3. Գրանցամատյանի տեղեկատվությունը թղթային կրիչի վրա տրամադրվում է անձի դիմումի հիման վրա:

Հոդված 7. Գրանցման համակարգի միասնականության սկզբունքը

Հայաստանի Հանրապետությունում գործում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցման միասնական համակարգ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով, գրանցում իրականացնելու նպատակով սպասարկման գրասենյակի միջոցով դիմելու լիազոր մարմին:

Հոդված 8. Գրանցամատյանի տվյալների արդիականացման սկզբունքը

1. Եթե Հայաստանի Հանրապետության կողմից էլեկտրոնային կարգով վարվող և պահվող տվյալները ենթակա են գրառման նաև Գրանցամատյանում, ապա այդ տվյալները փոփոխվելու դեպքում համապատասխան տեղեկատվությունը ինքնաշխատ կերպով արդիականանում է նաև Գրանցամատյանում:

2. Ինքնաշխատ կերպով արդիականացման ենթակա տվյալների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Հոդված 9. Պետական տուրքը և լիազոր մարմնի կողմից հավելյալ ծառայությունների վճարովիությունը

1. Սույն օրենքով նախատեսված գրանցման և այլ ծառայությունների համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով և կարգով:

2. Լրացուցիչ մատուցվող ծառայությունների տեսակները և ծառայությունների վճարների չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 2

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 10. Լիազոր մարմնի գործառույթները գրանցման կազմակերպման գործում

1. Լիազոր մարմինը՝

1) կազմակերպում և իրականացնում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցումը.

2) իրականացնում է Գրանցամատյանի վարումը՝ հավաքագրում, մշակում, տրամադրում, դասակարգում և արխիվացնում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը.

3) ապահովում է շարժական գույքի նույնականացումը.

4) սահմանված կարգով տրամադրում է տեղեկություններ Գրանցամատյանից.

5) ապահովում է իր գործունեությանն առնչվող օրենքներին և իրավական այլ ակտերին ծանոթանալու հնարավորությունը:

2. Լիազոր մարմինը չի կրում պատասխանատվություն՝ լիազոր մարմին ներկայացված փաստաթղթերում ներառված տվյալների հավաստիության համար:

Հոդված 11. Լիազոր մարմնի գործառույթները

Լիազոր մարմնի ղեկավարը՝

1) հաստատում է Գրանցամատյանի տեղեկություններից օգտվելու կարգը, ներառյալ՝ տրամադրվող քաղվածքների ձևերը.

2) սահմանում է մարմնի կողմից արխիվային գործերի վարման և պահպանության կարգը:

ԳԼՈՒԽ 3

ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 12. Լիազոր մարմին փաստաթղթեր ներկայացնելը

1. Համացանցում բոլորին հասանելի լիազոր մարմնի կողմից վարվող ապահովված տիրույթում լրացվում են հետևյալ տվյալները.

1) դիմում՝ գրանցում կատարելու վերաբերյալ, որը պետք է բովանդակի՝

ա. դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը).

բ. ապահովված անձի (պարտատիրոջ) անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների

համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, բնակության կամ հաշվառման հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը.

գ. պարտապանի անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, բնակության կամ հաշվառման հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը, ինչպես նաև պարտապանի համաձայնությունը.

դ. նշում, որ դիմումը ներկայացվում է լիազոր մարմին.

ե. նշում՝ գրանցվող իրավունքի մասին.

զ. ապահովված իրավունքի առարկայի նկարագիրը, պայմանները՝ գումարի չափը, ժամկետները, որոշիչ հատկանիշները կամ տվյալները.

է. գույքացուցակը, առկայության դեպքում .

ը. դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը.

թ. դիմումը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

ժ. դիմող անձի էլեկտրոնային ստորագրությունը, նոտարական սպասարկման գրասենյակ դիմում ներկայացնելու դեպքում՝ նոտարին հասցեագրած դիմումը:

2) օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը՝ բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության կողմից տված անդորրագրի հաստատված վճարման հանձնարարականի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից կամ կատարում է վճարում վճարային քարտի կամ վիրտուալ վճարային քարտի տվյալները տեղեկատվական համակարգ մուտքագրելու միջոցով:

2. Եթե պարտապանը օտարերկրյա իրավաբանական անձ է, ապա այդպիսի դիմումը ներառում է Հայաստանում գործելու համար գործող օրենքի համաձայն տվյալ իրավաբանական անձի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում):

3. Կողմերի ցանկությամբ լիազոր մարմին կարող է ներկայացվել նաև պայմանագիրը և այլ փաստաթղթերը:

4. Այն դեպքերում, երբ հնարավոր է որոշիչ ճշգրիտ տվյալների միջոցով որոշակիացնել շարժական գույքը, դիմողը պարտավոր է պայմանագրին համապատասխան նշել այդ որոշիչ հատկանիշները կամ տվյալները:

Հոդված 13. Լիազոր մարմնի կողմից գրանցումը մերժելը

Սույն օրենքով նախատեսված հիմքերով և կարգով ներկայացված դիմումը ինքնաշխատ համակարգի միջոցով մերժվում է, եթե դիմումը չի բավարարում սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Հոդված 14. Գրանցում

1. Լիազոր մարմինը պարտավոր է իրականացնել գրանցումը, եթե դիմումը բավարարում է սույն օրենքով սահմանված պահանջներին:

2. Գրանցումը կարող է իրականացվել նախքան ապահովված իրավունքի ծագումը կամ դրանից հետո:

3. Յուրաքանչյուր գրանցման դեպքում լիազոր մարմինը իրականացնում է հետևյալ գործողությունները.

1) իրականացնում է շարժական գույքի նույնականացում.

2) ստեղծում է գրառում, որը պարունակում է չկրկնվող համարը, գրանցման ամսաթիվը և ժամը.

3) ապահովում է գրանցման հասանելիությունը:

4. Լիազոր մարմինը դիմող անձին տրամադրում է գրանցման էլեկտրոնային գրառման օրինակը, ներառյալ՝ գրանցման համարը, գրանցման ամսաթիվը և ժամը:

5. Գրանցումն ուժի մեջ է մտնում Գրանցամատյանում գրառում կատարելու պահից:

Հոդված 15. Գրանցամատյանի վարումը

1. Առաջնային գրառումը գրանցվում և դասակարգվում է Գրանցամատյանում՝ ըստ ապահովված իրավունքի առարկայի գրանցման համարի:

2. Առաջնային գրանցումը և դրան առնչվող բոլոր գրանցումները Գրանցամատյանում դասակարգվում են՝ դրանց միջև կապն ապահովելով:

Հոդված 16. Գրանցում իրականացնելու իրավասությունը

1. Ապահովված անձի (պարտատիրոջ) կողմից գրանցումը կարող է իրականացվել միայն պարտապանի գրավոր համաձայնության առկայության կամ գրավոր պայմանագրով նախատեսված դեպքերում: Գրանցում իրականացնելու համաձայնությունը կամ համապատասխան դրույթ պարունակող պայմանագիրը ստորագրելով՝ պարտապանը տալիս է դիմումի մեջ ներառված տեղեկությունները հրապարակելու վերաբերյալ համաձայնությունը:

2. Սահմանափակման վերաբերյալ գրանցումը կարող է իրականացվել առանց պարտապանի համաձայնության, սահմանափակում կիրառող իրավասու մարմինների կամ ապահովված անձի (պարտատիրոջ) կողմից՝ շարժական գույքի նկատմամբ ապահովում կիրառելու կամ գույքի նկատմամբ բռնագանձում տարածելու դեպքերում:

Հոդված 17. Գրանցման բովանդակությունը

1. Գրանցումը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) գրանցման տևողությունը.

2) ֆիզիկական անձ պարտապանի նույնականացման (անձը հաստատող փաստաթղթի, հանրային ծառայության համարանիշի կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի) տվյալները, անվանումը, հաշվառման վայրը.

3) իրավաբանական անձ պարտապանի անվանումը, գրանցման համարը, հաշվառման վայրը.

4) ապահովված անձի (պարտատիրոջ) նույնականացման (անձը հաստատող փաստաթղթի, հանրային ծառայության համարանիշի կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի) տվյալները, անվանումը, հաշվառման կամ գտնվելու վայրը.

5) շարժական գույքի նկարագիրը, այդ թվում՝ որոշիչ հատկանիշները (տվյալները), գրանցման համարը:

2. Գրանցումը կարող է կատարվել մեկից ավելի պարտապանի (համապարտ պարտապանի) և մեկից ավելի ապահովված անձի (համիրավ պարտատիրոջ) վերաբերյալ:

3. Գրանցումը կարող է վերաբերել մեկից ավելի ծանրաբեռնվածությունների կամ մեկից ավելի պայմանագրերի կամ սահմանափակումների:

Հոդված 18. Գրանցման տևողությունը և ժամկետի ավարտի հետևանքները

1. Գրանցամատյանում գրանցումը ուժի մեջ է դրա մեջ նշված ժամկետում: Գրանցումն ուժը կորցնում է դրանում նշված ժամկետի ավարտին, եթե մինչև այդպիսի գրանցման ժամկետի ավարտը չի ներկայացվում դրա ժամկետը երկարաձգելու մասին դիմում:

2. Ապահովված իրավունքի առարկա շարժական գույքի վաճառքի, փոխանակման, այլ ձևով օտարման կամ վարձակալության դեպքում ապահովված իրավունքի վերաբերյալ գրանցումը շարունակում է ուժի մեջ մնալ օտարումից հետո՝ անկախ ապահովված անձի՝

նման օտարմանը տեղյակ լինելու կամ համաձայնություն տալու հանգամանքից՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Այլ գրավոր համաձայնության բացակայության դեպքում պարտապանի կողմից ապահովված իրավունքի առարկա հանդիսացող շրջանառության մեջ գտնվող գույքն օտարելու ժամանակ գրանցված ապահովված իրավունքը տարածվում է այդ առարկայի օտարումից ստացված միջոցների վրա, որի համար լրացուցիչ գրանցում չի պահանջվում:

4. Գրանցումը չի տարածվում այն անձի վրա, ով ապահովված իրավունքի առարկան ձեռք է բերել հատուցման դիմաց:

Հոդված 19. Փոփոխությունների գրանցումը և դրա ուժի մեջ մտնելը

1. Գրանցումը կարող է փոփոխվել ապահովված անձի (պարտատիրոջ) դիմումով:

2. Եթե գրանցման փոփոխությամբ փոփոխվում է ապահովված իրավունքի առարկան, ապա այդ փոփոխությունը պետք է հիմնված լինի ապահովման պայմանագրի կամ այլ գրավոր պայմանագրի վրա:

4. Մեկից ավելի ապահովված անձի (պարտատիրոջ) մասին գրանցում կատարված լինելու դեպքում փոփոխությունը գործում է միայն փոփոխության գործարքի կողմ հանդիսացող պարտատիրոջ նկատմամբ:

5. Գրանցման փոփոխությունը ուժի մեջ է մտնում գրանցելու պահից:

6. Գրանցման փոփոխությունը իրավական ուժ չունի, եթե բացակայում են ապահովված անձի (պարտատիրոջ) տվյալները:

7. Փոփոխության գրանցմամբ գրանցման գործողության ժամկետը չի երկարաձգվում, եթե ժամկետի երկարաձգման վերաբերյալ հատուկ նշված չէ:

8. Գրանցման եղանակով նախապատվության իրավունք ձեռք բերած անձի կողմից ապահովված իրավունքը զիջելու դեպքում, այն ձեռք բերած անձի համար նախապատվության իրավունքը շարունակվում է, և լրացուցիչ գրանցում չի պահանջվում:

Հոդված 20. Ժամկետը երկարաձգելու դիմում

1. Գրանցման ժամկետը կարող է երկարաձգվել միայն դիմումի ներկայացմամբ, որում նշվում է՝

1) առաջնային գրանցման համարը և շարժական գույքի համարը.

2) գրանցման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ պարտապանի գրավոր համաձայնությունը, որը ենթակա է նոտարական վավերացման:

2. Ժամկետը երկարաձգելու մասին դիմումը կարող է ներկայացվել գրանցման ուժի մեջ լինելու ժամանակահատվածում:

3. Ժամկետը երկարաձգելու մասին դիմում ներկայացնելու դեպքում գրանցումը շարունակում է մնալ ուժի մեջ մինչև դիմումում նշված ժամանակահատվածը կամ այլ հիմքերով դադարումը:

Հոդված 21. Առարկության գրանցում

1. Պարտապանը կարող է ներկայացնել իր նկատմամբ գրանցված ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմում, եթե գրանցումը հիմնված է փաստերի վրա կամ սխալ է գրանցված: Ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմումում նշվում են՝

1) շարժական գույքի համարը.

2) գրանցման ոչ ճիշտ լինելու վերաբերյալ հիմնավորումները:

2. Ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմումին կցվում է պահանջը հիմնավորող փաստաթուղթը:

3. Ապահովված իրավունքի դեմ առարկելու մասին դիմումը գրանցվում է ապահովված իրավունքի գրանցման հետ համատեղ:

Հոդված 22. Գրանցումը դադարեցնելը

1. Գրանցման գործողության ժամկետը դադարեցվում է ապահովված անձի դիմումի հիման վրա, որում նշվում է գրանցման համարը և շարժական գույքի համարը:

2. Գրանցման գործողության ժամկետը դադարեցնելու մասին պարտապանը կարող է գրավոր դիմել ապահովված անձին (պարտատիրոջը): Պարտապանի դիմումը ստանալու պահից հինգ օրվա ընթացքում ապահովված անձը (պարտատերը) պարտավոր է գրանցումը դադարեցնելու մասին դիմում ներկայացնել լիազոր մարմին, եթե պարտավորությունը կատարված է:

3. Գրանցված գրառումը դադարեցնում է գործողությունը և ճանաչվում է անվավեր՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

ԳԼՈՒԽ 4

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 24. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հոկտեմբերի 1-ից:
2. Մինչև օրենքի ուժի մեջ մտնելը շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցումները պահպանում են իրենց իրավաբանական ուժը և ենթակա չեն վերագրանցման:
3. Սույն օրենքով նախատեսված լիազոր մարմինը ստեղծվում է մինչև 2015 թվականի փետրվարի 1-ը:
4. Մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների վերաբերյալ կատարված գրանցումների վերաբերյալ տեղեկությունները էլեկտրոնային եղանակով փոխանցվում են լիազոր մարմնին՝ ապահովելով համակարգի տվյալների թարմացումը ինքնաշխատ կարգով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-593-09.09.2014_01.10.2014-ՊԻ-010/1) և կից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն	Քրեական օրենսգրքին վերաբերող դրույթները հանել Նախագծից:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.		Նախագծի 5-րդ և 6-րդ հոդվածներն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրանցամատյանի տեղեկատվությունը, ինչպես նաև քաղվածքները տրամադրվում են ՀՀ կառավարության կողմից նախատեսված կարգով, իսկ 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրանցամատյանի տեղեկատվությունը թղթային կրիչի վրա տրամադրվում է անձի դիմումի հիման վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով: Հարկ է նկատել, որ նախագծով նաև չի սահմանվում տեղեկատվության տրամադրման կարգը:	Ընդունվել է:	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասից հանվել են՝ «սույն օրենքով սահմանված կարգով» բառերը:
3.		Սպասարկման գրասենյակի գործառույթ իրականացման միջոց նախատեսել նաև լիազոր մարմնի համացանցում բոլորին հասանելի	Ընդունվել է:	Նախագծի 3-րդ հոդվածի 11-րդ մասը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «սպասարկման գրասենյակ՝ Լիազոր մարմնի համացանցում

		ապահովված տիրույթը:		բոլորին հասանելի ապահովված տիրույթ, սպասարկման գրասենյակի գործառույթների իրականացնող նոտար»:
4.		Նախագծի 4-րդ հոդվածից հանել 1-ին կետը՝ հաշվի առնելով, որ տվյալ օրենքը նպատակ չի հետապնդում նպաստելու անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանվածությանը, այլ հանդիսանալու է տեղեկատվության աղբյուր:	Ընդունվել է:	Նախագծից հանվել է 4-րդ հոդվածի 1-ին կետը:
5.		Նախագծի հոդված 9-ի վերնագրում «Գործակալության» բառը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
6.		Նախագծի հոդված 12-ի 1-ին մասը համապատասխանեցնել էլեկտրոնային համակարգի կիրառման ձևաչափին:	Ընդունվել է:	Նախագծի հոդված 12-ի 1-ին մասը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ «Համացանցում բոլորին հասանելի լիազոր մարմնի կողմից վարվող ապահովված տիրույթում լրացվում են հետևյալ տվյալները.»:
7.		Նախագծի հոդված 13-ը հանել, քանի որ ըստ էության կրկնում է 12-րդ հոդվածի բովանդակությունը:	Ընդունվել է:	Նախագծից հանվել է 13-րդ հոդվածը: Միաժամանակ, 12-րդ հոդվածը վերախմբագրվել է՝ ներկայացվող տեղեկատվության ամբողջ ծավալը ներառելու նպատակով:
8.		Նախագծից հանել «նույնականացման համար» արտահայտությունը՝ փոխարինելով «գրանցման համար» բառերով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

9.		<p>Խմբագրել 19-րդ հոլվածը ելնելով նրանից, որ փոփոխությունը գրանցելու դեպքում, փոփոխման ենթակա է միայն ապահովված իրավունքի առարկան: Կողմի փոփոխության դեպքում գրանցումը կհամարվի նոր գրանցում և ոչ թե փոփոխություն:</p>	Ընդունվել է:	Նախագծի 19-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
10.		<p>Նախագծի հոդված 22-ից հանել պարտապանի կողմից դիմում ներկայացնելու վերաբերյալ դրույթը, քանի որ դիմումը ներկայացվելու է ապահովված անձի կողմից:</p>	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
11.		<p>Քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 3-րդ կետում «անշարժ գույքի գրավի պայմանագրերից ծագող իրենց իրավունքներն առավել ուշ գրանցած» բառերից հետո ավելացնել «կամ չգրանցած գրավառուների» բառերը:</p>	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
12.		<p>«Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը անհրաժեշտ է լրանշակել այնպես, որ օդանավի նկատմամբ ապահովված իրավունքի վերաբերյալ տեղեկությունների գրանցումը պարտադիր բնույթ չկրի:</p>	Ընդունվել է:	<p>«Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասությամբ. «Օդանավը գրավի առարկա հանդիսանալու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է ներկայացվել գրանցման «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի</p>

				Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:
13.		«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.3-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում, եթե հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ շարժական գույքը, ապա հարկային մարմնի ղեկավարն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի շարժական գույքի վրա սահմանափակում կիրառելու մասին հանձնարարագիր հրապարակել:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
14.	ՀՀ ԱԺ պատգամավոր Գագիկ Զհանգիրյան (առաջարկությունը ներկայացվել է	Հաշվի առնելով այն, որ նոտարները հասարակությանը հասանելի հանրային ցանց է անհրաժեշտ է պայմանագրային հարաբերությունները հանել նոտարների համար, դրանով իսկ յուրաքանչյուր նոտար կիրականացնի	Ընդունվել է:	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է:

<p>բանավոր 05.12.2014թ. ՀՀ Ազգային Ժողովում տեղի ունեցած աշխատանքային քննարկման ժամանակ)</p>	<p>սպասարկման գրասենյակի գործառույթներ՝ ապահովելով համակարգի մատչելիությունը և արդյունավետությունը:</p>		
--	---	--	--